

**«ԿԱՆԹԵՂ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
ԹԵՄԱ՝ ---Օտար լեզուների ուսուցման մեթոդները-----**

ՀՀ Լոռու մարզի Շառլ Ազնավուրի անվան թիվ 3
հիմնական դպրոցի անգլերենի ուսուցիչ՝ Հերմինե
Բաղրամյան

2023թ

Բովանդակություն

Ներածություն-----	1
«Ուսուցում» հասկացությունը: Նշանակությունը և նպատակները.-----	2
Ուսուցման մեթոդների դերն ու առանձնահատկությունը, ուսուցման մեթոդների դասակարգումը-----	4
Օտար լեզուների դասավանդման նպատակներն ու մեթոդները ուսուցման գործընթացում-----	6
Եզրակացություն-----	11
Օգտագործված գրականության ցանկ-----	12

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ուսուցումն անձնավորության ձևավորման կարևորագույն գործոններից է: Ուսուցման նպատակներն են կրթել, դաստիարակել և զարգացնել սովորողներին, ինչն էլ հնարավոր է միայն ուսուցման մեթոդների կիրառմամբ: Վերջիններիս ճիշտ ընտրությունն էլ ապահովում է ուսուցման արդյունավետությունը: Ուսուցման մեթոդները բազմաթիվ են. մարդկության զարգացմանը զուգընթաց դրանց շարքերը համալրվում են նոր՝ ժամանակակից մեթոդներով: «Օտար լեզուների ուսուցման մեթոդները» թեմայի ուսումնասիրության արդյունքում անդրադարձել ենք հետևյալ հիմնական հարցերին. ի՞նչ է ուսուցումը և ի՞նչ նպատակներ է այն հետապնդում, ի՞նչ է մեթոդը, մեթոդների ի՞նչ դասակարգումներ գոյություն ունեն, որո՞նք են օտար լեզուների ուսուցման մեթոդների առանձնահատկությունները:

Օտար լեզուների ուսուցանումը ներկայումս գրեթե բոլոր երկրների ուսումնական պլանի բաղկացուցիչ մասն է: Եվ իսկապես, մենք ապրում ենք այնպիսի իրականությունում, որտեղ օտար լեզուների իմացությունը ոչ միայն խրախուսվում է, այլև անհրաժեշտություն է պետական մակարդակով: Օտար լեզվի յուրացումն օգնում է ժողովուրդների փոխըմբռնմանը, նպաստում երկրների միջև բարեկամական, գործարար և մշակութային կապերի հաստատմանը:

Օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց խոսքն ու մտածողությունը:

Օտար լեզվի ուսուցանումը, ինչպես ուսուցման գործընթացի յուրաքանչյուր տարր, ծառայում է կրթության գլխավոր նպատակի իրագործմանը, մասնավորապես, ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից ազատ անհատի դաստիարակմանը, ով կկարողանա իր ներդրումն ունենալ քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման գործում: «Օտար լեզուների ուսուցման մեթոդները» թեմայի ուսումնասիրության ժամանակ օգտագործել ենք հիմնականում հայրենական հեղինակների աշխատությունները, որոնք էլ հանդիսանում են աշխատանքի տեսական հիմքը: Աշխատանքը կազմված է նախաբանից, ենթավերնագրերից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

«ՌԻՍՈՒՑՈՒՄ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ: ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

Բոլոր հեղինակներն էլ իրենց աշխատություններում տվել են «ուսուցում» հասկացության սահմանումը: Եվ այսպես. «Ուսուցումը ճանաչողական գործընաց է, որի ընթացքում սովորողները ձեռք են բերում գիտելիքներ, կարողություններ և հմտություններ»:¹

Ուսուցումը երկկողմանի գործընթաց է, որում փոխկապակցված աշխատանք են կատարում ուսուցիչը և աշակերտը, սովորեցնողը և սովորողը: Ուսուցման արդյունքում երեխան (սովորողը) ձեռք է բերում իրականության տարբեր բնագավառների վերաբերյալ ընդհանրացված գիտելիքներ և դրանց հիման վրա ձևավորում կարողություններ և հմտություններ: Սովորողի ուսումնական գործունեության արդյունավետությունը կախված է կրթության բովանդակությունից. կրթության բովանդակությունն ասելով հասկանում ենք այն ամենի գումարը, որ կա ուսումնական պլաններում, ծրագրերում, դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում և որը պետք է դառնա սովորողի սեփականությունը:² Այսպիսով, կարող ենք ասել, որ կրթության բովանդակության մեջ ընդգրկվում է այն ամենը, ինչն անհրաժեշտ է յուրաքանչյուրիս՝ ամենատարբեր բնագավառներում ստեղծագործ անձնավորություն դառնալու համար:

Ուսուցումն իմացական գործընթաց է, որի ընթացքում մարդը ծանոթանում է աշխարհի օբյեկտիվ պատկերին, ըմբռնում օբյեկտիվ աշխարհի և հենց իր առանձնահատուկ գործունեության օրինաչափություններն ու մեխանիզմները:³ Սակայն պետք է իմանանք, որ ամեն մի իմացական գործընթաց ուսուցում չէ (օրինակ՝ ուսուցում չի կարող համարվել առօրյա կյանքի կամ հաղորդակցման ընթացքում տեղի ունեցող իմացությունը, որը հատուկ կազմակերպված չէ, որի արդյունքները երաշխավորված չեն, սովորաբար հակասական, պարզունակ և աղքատ են): Եվ որպեսզի իմացական գործընթացը համարվի ուսուցում, ապա այն պետք է ներառի հետևյալ տարրերը.

¹ Յու.Ա.Ամիրջանյան, Ա.Ս.Սահակյան «Մանկավարժություն», էջ 129

² Ս.Մանուկյան «Ընդհանուր մանկավարժություն», էջ 181

³ Յու.Ա.Ամիրջանյան, Ա.Ս.Սահակյան «Մանկավարժություն», էջ 284

- Ուսուցումը անձնավորության գիտակցությունը զարգացնելու և ձևավորելու հատուկ կազմակերպված գործընթաց է, որի ամենաէական հատկանիշը երկու սուբյեկտների համատեղ գործունեությունն է. դասավանդումը՝ մանկավարժի, ուսումը՝ սանի:
- Սովորողին գիտելիքներ տալը, նրա մտավոր զարգացումը ուսուցման բացահայտ անփոխարինելի նպատակն ու ֆունկցիան է: Այն հատուկ կարգավորված, հատուկ ժամանակում կազմակերպվող պաշտոնական, հասարակայնորեն արժևորված միջոցառում է:
- Ուսուցման մյուս ֆունկցիան սովորողի մտավոր և հոգեկան անհատական զարգացման արագացումն է: Մարդու կյանքի միայն մի որոշ շրջան է հատկացվում ուսուցմանը և հասարակական կյանքին նրան նախապատրաստելուն: Ուսուցումը պետք է որոշակի ժամանակի ընթացքում ավարտվի:
- Ուսուցման նպատակը պարզապես հիշողությունը ծանրաբեռնելը չէ: Ուսուցման արդյունքը պետք է լինի որոշակի կրթվածության մակարդակը, որի հիման վրա էլ սովորողը կդառնա հասարակության լիարժեք անդամ, կկարողանա լուծել իր կենսական խնդիրները և ստեղծագործել:

Ուսումնական գործընթացը, որպես մանկավարժական գործընթաց, իրականացվում է հետևյալ հիմնական փուլերով. նախապատրաստական, իրականացման, արդյունքների վերլուծության և սխալների ուղղման:

Այսպիսով, դիտարկելով տարբեր հեղինակների մոտեցումները՝ կարող ենք ասել, որ ուսուցման գործընթացը ուսուցիչների և աշակերտների (սովորողների) փոխկապակցված, իրար հաջորդող ու փոփոխվող փոխազդեցությունն է, որի ընթացքում լուծվում են սովորողների կրթության, դաստիարակության և ընդհանուր զարգացման խնդիրները: Այն նպատակաուղղված մանկավարժական գործընթաց է, որը խթանում է սովորողների գործունեությունը՝ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու, իրենց ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու, գիտական աշխարհայացք, բարոյական որակներ ու համոզմունքներ ձևավորելու համար:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ

ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ. Ուսուցման մեթոդները ուսուցման նպատակին հասնելու՝ ուսուցչի և աշակերտի փոխգործունեության ուղիներն ու եղանակներն են: Մեթոդ բառն առաջացել է հունարեն *methodos* – ուղի, եղանակ բառից: Մեթոդի ընդհանուր ֆունկցիան սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման ապահովումն է՝ սովորողի զարգացման գործընթացին ուղղության տալու միջոցով:⁴ «Ուսուցման մեթոդ» հասկացությունը բացահայտելու համար կարևոր է հասկանալ, թե ինչ է ներկայացնում մեթոդական հնարը: Վերջինս ուսուցման մեթոդի բաղկացուցիչ մասն է, նրա կոնկրետ դրսևորումը: Ճանաչողական գործունեության միևնույն եղանակը կարող է հանդես գալ և՛ որպես մեթոդ, և՛ որպես հնար՝ կախված նրանից, թե ինչ գործառույթ է այն իրականացնում ուսուցման գործընթացում: Օրինակ՝ հարց ու պատասխանն ինքնուրույն մեթոդ է, բայց երբ պատմելու ընթացքում ուսուցիչը, որպես արդյունավետության բարձրացման միջոց օգտագործում է հարց ու պատասխանը, ապա վերջինս տվյալ պարագայում հանդես է գալիս որպես հնար: Հնարն ուսուցչի ստեղծագործության արդյունք է. այն արտացոլում է ուսուցչի անհատականությունը և ինքնատիպությունը: Իրենց գործի գիտակ ուսուցչիները անընդհատ փորձում են ստեղծել նոր ու արդյունավետ հնարներ, որոնք նպատակ ունեն բարձրացնելու կիրառվող մեթոդի արդյունավետությունը: Ուսուցման պրոցեսում ուսուցման մեթոդի արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Դրանք են.

- ուսուցման նպատակները և խնդիրները,
- ուսումնական նյութի բովանդակությունը,
- ուսումնական նյութի քանակը և բարդությունը,
- սովորողների պատրաստվածության մակարդակը,
- տարիքային առանձնահատկությունները,
- ուսուցման նյութատեխնիկական պայմանները,
- նախորդ դասերին կիրառված մեթոդները,
- պարապմունքի տեսակը և կառուցվածքը,
- սովորողների թվաքանակը,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը և այլն:⁵

⁴ Գ.Ե.Ղույումյան «Մանկավարժություն», էջ 426

⁵ Գ.Ե.Ղույումյան «Մանկավարժություն», էջ 428

Մեթոդների ճիշտ ընտրությունը պայմանավորում է գիտելիքների յուրացման արդյունավետ մակարդակը: Ուսուցման մեթոդները կազմում են միասնական տրամաբանական համակարգ և միայն ճիշտ զուգակցման դեպքում կարող են ապահովել իրենց բոլոր ֆունկցիաների լիարժեք իրականացումը: Սրանք բացառապես միասնության մեջ կարող են ապահովել ուսուցման գործընթացի ամբողջականությունն ու արդյունավետությունը:

Ելնելով տարբեր չափորոշիչներից, ուսուցման մեթոդները ենթարկվում են դասակարգման: Անցյալ դարի երկրորդ կեսին խորհրդային իրականության մեջ առավել մեծ տարածում է ստացել ակադեմիկոս Բաբանսկու կողմից տրված դասակարգումը: Այն է.

1. ուսումնաճանաչողության գործունեության կազմակերպման և իրականացման մեթոդներ,
2. խթանման և մոտիվացիայի մեթոդներ,
3. վերահսկողության և ինքնավերահսկողության մեթոդներ:

Մատյուշկինը դասակարգման հիմքում դնում է սովորողի մասնակցությունը ճանաչողական խնդրի լուծման ժամանակ և ըստ այդմ էլ ուսուցման մեթոդները խմբավորում է որոնողական, մասնակի որոնողական, պրոբլեմային և էվրիստիկ մեթոդների: Ըստ սովորողների ակտիվության աստիճանի ուսուցման մեթոդները բաժանվում են ակտիվ և պասիվ տեսակների:

Ի.Յա. Լերները և Մ.Ն. Սկատկինը առաջարկում են մեթոդները դասակարգել ըստ աշակերտի ճանաչողական գործունեության բնույթի.

- հետազոտական մեթոդներ,
- մասնակի որոնողական մեթոդներ,
- վերարտադրողական մեթոդներ:

Ելնելով ժամանակակից դիդակտիկայի խնդիրներից, ուսուցման մեթոդները բաժանվում են նոր գիտելիքներ ձեռք բերող, կարողություններ և հմտություններ ձևավորող, ինչպես նաև գիտելիքները, կարողություններն ու հմտությունները ամրակայող, վերահսկող և ստուգող մեթոդների:⁶

⁶ Յու.Ա.Ամիրջանյան, Ա.Ս.Սահակյան «Մանկավարժություն», էջ 159-160

Գոյություն ունեն ուսուցման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ, սակայն գիտնականների զգալի մասը այն իրականացնում է՝ ելնելով գիտելիքների աղբյուրից: Վերջինիս հիման վրա էլ մեթոդները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1. խոսքային (պատմել, զրույց, դասախոսություն),
2. զննական (իլյուստրացիայի և դեմոնստրացիայի մեթոդներ),
3. գործնական (վարժություններ, լաբորատոր պարապմունքներ և այլն):

Եվ հենց այս դասակարգումն էլ ներկայումս լայն տարածում ունի:

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ. Օտար լեզուների ուսուցումը ուսումնական գործընթացի բաղկացուցիչ տարրն է, որի հիմնական և վերջնական նպատակը սովորողների բանավոր ու գրավոր խոսք ուսուցանելն է:

Օտար լեզվի ուսուցման առաջնային նպատակը, ի տարբերություն մյուս առարկաների ուսուցման, հաղորդակցելն է: Կրթական ու դաստիարակչական նպատակներն իրագործվում են հաղորդակցական նպատակի հետ միաժամանակ: Հաղորդակցական (գործնական) նպատակի էությունը կայանում է նրանում, որ սովորողները օտար լեզվի ուսուցման արդյունքում պետք է տիրապետեն ինֆորմացիա ընդունելու և հաղորդելու կարողությանը: Իսկ ինչ վերաբերում է ուսուցման կրթական ու դաստիարակչական նպատակներին, ապա վերջիններիս մասին խոսել ենք առաջին գլխում:

Ինչպես ցանկացած առարկայի, այնպես էլ օտար լեզվի ուսուցումն իրականացվում է ուսուցման այս կամ այն մեթոդի միջոցով:

Օտար լեզուների ուսուցման մեթոդիկայի պատմության մեջ «մեթոդ» հասկացությունն օգտագործվում է 2 տարբեր իմաստներով՝

- 1) որպես մեթոդական համակարգ կամ մեթոդական ուղղություն (ընդհանուր իմաստով),
- 2) որպես ուսուցման եղանակներից մեկը (մասնավոր իմաստով):

Առաջին դեպքում խոսքը գնում է քերականա-թարգմանական, ուղիղ, խառը, գիտակցական-համադրական և ինտենսիվ մեթոդների մասին: Երկրորդ դեպքում, ավելի մասնավոր իմաստով, մեթոդ տերմինի հասկացությունը հենվում է դիդակտիկայի սվյալների վրա:

Ինչպես բազմիցս նշել ենք, մեթոդներ են համարվում ուսուցչի և սովորողների աշխատանքի այն եղանակները, որոնց միջոցով սովորողները ձեռք են բերում գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:⁷

Օտար լեզուների համար մեթոդների և եղանակների առանձնացման առաջին փորձը կատարվել է 60-ական թվականների վերջին, երբ Վ.Ս.Յետլինը «օտար լեզուների ուսուցման ընդհանուր մեթոդիկայում» առաջարկեց տարբերել երեք մեթոդ-եղանակներ՝ ցուցադրում, բացատրություն, վարժություն:⁸

Հենց այս մեթոդները որոշ վերափոխությամբ 70-ական թվականների կեսին տրոհվեցին դասավանդման և ուսուցման մեթոդների: Հիմնվելով Իյինայի և Մախմուդովի տեսության վրա, Ի.Լ.Բիմն առանձնացրեց ուսուցչի և սովորողի մեթոդները: Ուսուցչի մեթոդներն են. ցուցադրում, բացատրում, մարզման և կիրառման կազմակերպում, սովորողներին՝ ծանոթացում, մարզում, կիառում:⁹ Սակայն վերոնշյալ դասակարգումների մեջ օտար լեզուներ դասավանդելիս հաշվի չի առնվում ֆունկցիոնալ մոտեցումը՝ խոսքի վերարտադրումը և խոսքի ըմբռնումը:

Գիտակցական-հաղորդակցական ուղղության ներկայացուցիչները ստեղծել են ուսուցման մեթոդների սկզբունքորեն նոր կոնցեպցիա, հաշվի անելով օտար լեզուների ուսուցման յուրահատկությունը՝ խոսքային գործունեություն, լեզվական գիտելիքներ և լեզվային կարողություններ:

Օտար լեզվի ուսուցման յուրահատկությունը նաև վարժությունների մեջ է: Ի տարբերություն այլ առարկաների, որտեղ իմաստային կողմը մեծ նշանակություն ունի, տեքստը պետք է դիտել որպես հատուկ վարժություն օտար լեզվով խոսքային գործունեության որոշակի տեսակի ուսուցման համար:

Գոյություն ունի լեզուն ուսումնասիրելու երեք մոտեցում և բոլոր մեթոդները պայմանականորեն բաժանվում են հետևյալ խմբերի.

Կառուցվածքային մոտեցում (լեզուն դիտվում է որպես քերականական էլեմենտների միմյանց կապակցված համակարգ)

Քերականական թարգմանության մեթոդ (The Grammer Translation Method)– Այս մեթոդը մեզ հայտնի է դեռ սովետական ժամանակներից, որը հիմնված է գրավոր

⁷ «Մանկավարժություն» ՄՍՀՄ ՄԳԱ անդամ Յու.Կ.Բաբանսկու խմբագրությամբ, էջ 189

⁸ «Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա» Մ.Գ.Աստվածատրյան, էջ 43

⁹ «Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա» Մ.Գ.Աստվածատրյան, էջ 42-43

թարգմանության և ընթերցանության վրա: Այս դեպքում սովորաբար կազմվում են տեքստեր, որոնք ուղղված են որոշ քերականական կանոնների մշակմանը: Հիմքում ընկած են բառուսուցումը, ուղղագրությունը, քերականությունն ու քերականորեն հարուստ տեքստերի գրավոր թարգմանության միջոցով պրակտիկան: Հիմա այս մեթոդն օգտագործվում է մեռած լեզուներն ուսումանսիրելու համար:

Աուդիո – լեզվական մեթոդ (Audio-lingual method)

Այս մեթոդի էությունը նրանում է, որ սովորողն անընդհատ լսում ու կրկնում է օտար լեզվով ձայնագրությունը:

(Proprioceptive method)

Մեթոդի նպատակն է միաժամանակ աշխատանքի մեջ ներգրավել ուղեղի ճանաչողական, նյարդաբանական և լսողական ֆունկցիաները: Այս մեթոդի կողմնակիցները պնդում են, որ սովորողն ուսուցման ընթացքում պետք է իր լեզուն, բանավոր խոսքն օգտագործի անընդհատ, նույնիսկ գրավոր առաջադրանքներ կատարելիս:

Ֆունկցիոնալ մոտեցում, որտեղ լեզուն հանդիսանում է որոշակի գործառնությունների /ֆունկցիաների/ արտահայտման և իրականացման միջոց:

7

Լեզվի իրավիճակային ուսուցում – Բանավոր մոտեցում (Situational language teaching(Oral approach)

Հիմնված է լեզվի կառուցվածքի վրա: Սովորողը կրկնության միջոցով սովորում է առավելագույնս հաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները և դրանք անմիջապես օգտագործում պրակտիկայում: Այստեղ բանավոր խոսքը իշխում է գրավոր խոսքի վրա և առավելագույն ուշադրություն է դարձվում սխալների վրա, որոնք կարող են թույլ տրվել բանավոր խոսքի ընթացքում:

Ուղղորդված պրակտիկա /փորձառություն/ (Directed practice)

Այս դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտությունները մինչև վերջիններիս մեխանիկորեն անգիր անելը: Այսպես տուժում է սովորողի բառապաշարն ու լեզվի ճկունությունը, սակայն հասնում ենք լեզվի հիմնային/ բազային/ արտահայտությունների ավտոմատ տիրապետմանը:

Ինտերակտիվ մոտեցում. լեզուն հանդիսանում է սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման գործիք:

8

Ուղղակի մեթոդ (The direct method)

Նախատեսվում է, որ օտար լեզուն ուսուցանվում է մայրենի լեզվի նման, այսինքն ինքը, սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով, իսկ մայրենի լեզվի օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է: Մեթոդի գաղափարը օտար լեզվի <<բնական>> յուրացումն է, ինչպես մայրենի լեզվի դեպքում:

Հաջորդականության մեթոդ (The series method)

Բառապաշարի հարստացում հաջորդաբար կատարվող գործողություններն անընդհատ կրկնելով:

Օր.՝ Ամեն առավոտ ես արթնանում եմ ժամը 7-ին, լոգանք եմ ընդունում, հագնվում եմ, նախաճաշում եմ, սրճում եմ, գնում դպրոց, դասերից հետո ընկերներով հավաքվում ենք և այլն: Այս նույն օրինակը կարելի է օգտագործել տարբեր ժամանակաձևերով ավելի լավ յուրացման համար

Խոսակցական ուսուցում (Communicative language teaching)

Նախատեսում է ուսումնասիրվող լեզվի օգտագործումը ոչ միայն հանձնարարություններ կատարելու այլև դասավանդողի և մյուս սովորողների հետ շփվելու համար: Այն ներառում է այնպիսի ինտերակտիվ վարժություններ, ինչպիսիք են երկխոսությունները, դերախաղերը, խմբային աշխատանքները և այլն:

Ընկղմում լեզվի մեջ (Language immersion)

Մեթոդն օգտագործվում է տարրական դպրոցում, առաջ քաշելով երկլեզվության (բիլինգվիզմ) տարբերակը՝ դպրոցական ծրագրով նախատեսված առարկաներն ուսուցանելով օտար լեզվով: Նույնիսկ մայրենի լեզվով ընթերցանությունը սկսում են օտար լեզվով կարդալու փուլն անցնելուց հետո:

Լռության մեթոդ (Silent Way)

Այս դեպքում ուսուցիչն ավելի շատ լռում է, քան խոսում: Արտասանությունը սովորեցնելով տարրական դասարաններում, ուսուցիչն օգտագործում է տարատեսակ գունավոր աղյուսակներ, որտեղ ամեն մի գույնը կամ նշանը մի հնչյուն են նշանակում: Այս ճանապարհով էլ նոր բառեր են ուսուցանվում:

Բնական մոտեցում (Natural approach)

Շեշտը դրվում է այն հասկացության վրա, որ սովորողը կարող է սովորել ամեն ինչ: Ցանկացած նոր դաս պետք է հիմնված լինի նախորդ դասի վրա և լինի մատչելի

յուրացման համար:

Ֆիզիկական արձագանքման մեթոդ (Total Physical Response)

Առաջին փուլում սովորողները պասսիվ ընկալում է նյութը՝ առանց այն օգտագործելու: Երկրորդ փուլում նրանք պետք է արձագանքեն որոշ բառերի, հասկապես բայերին, օրինակ, դրանք կատարելով: Եվ միայն այս երկու փուլը հաղթահարելուց հետո միայն սովորողներն իրենք են գործածում յուրացրած նյութը:

Կարդալու և պատմելու մեթոդ (Teaching proficiency through Reading and Storytelling)

Համարվում է Ֆիզիկական արձագանքման մեթոդի ենթաձյուղ: Դասավանդողը հարուստ բառապաշարով փոքրիկ պատմություններ է պատմում սովորողներին, հետո էլ հարցեր տալիս պատմության վերաբերյալ: Վերջիններս պետք է պատասխանեն հարցերին օգտագործելով նյութի բառերը:

Դոգմա մեթոդ (Dogme language teaching)

Այս մեթոդը հրաժարվում է լեզվի ուսուցման ընթացքում որևէ դասագիրք օգտագործելուց՝ շեշտադրելով դասավանդող-սովորող շփումը: Ուսուցողական նյութերը, որոնցից պետք է օգտվի սովորողը հենց իր կողմից ստեղծված նյութերը պետք է լինեն:

Հեղինակային մեթոդներ

Պիմսլերի մեթոդը (Pimsleur method) հիմնված է աուդիո ձայնագրությունների օգտագործման վրա: Վերջիններս աստիճանաբար բարդանում են, ամեն անգամ ներմուծելով ակտիվ նոր բառապաշար:

Միշել Թոմասի մեթոդ (Mishel Thomas Method)

Այն իր մեջ ներառում է դասարանում արված մի շարք աուդիո ձայնագրություններ, որտեղ դասավանդողն աշխատում է երկու սովորողի հետ, բացատրում նրանց քերականական կանոնները, սովորեցնում բառագիտություն և հանձնարարություններ տալիս: Լսողը ինքնաբերաբար ներառվում է դասապրոցեսի մեջ՝ ստանալով խմբում աշխատելու տպավորություն:

Եզրակացություն

Այսպիսով ժամանակակից դիդակտիկայում մշակված է ուսուցման մեթոդների նկատմամբ նոր մոտեցում, որը հաշվի է առնում մի կողմից նյութի յուրացման դինամիկան, (շարժությունը), մյուս կողմից՝ այդ նյութի հետ գործելու եղանակները:

Օտար լեզուների ուսուցման մեթոդները կարող են ներկայացվել մի կողմից ըստ բովանդակության մակարդակի, մյուս կողմից՝ ըստ խոսքային գործունեության տեսակի (ռեցեպտիվ, պրոդուկտիվ):

Այսպիսով, խոսքային գործունեության համար կարելի է առանձնացնել հետևյալ մեթոդները.

1. բացատրում-ցուցադրում
2. մարզումների կազմակերպում
3. պրակտիկայի կազմակերպում
4. պրոդուկտիվ-իմացական խոսքային գործունեության կազմակերպում:

Օտար լեզուների ուսուցման մեթոդների ընտրությունը պայմանավորված է ինչպես ուսումնասիրվող նյութի բովանդակությունից, այնպես էլ սովորողների տարիքից, զարգացվածության աստիճանից և բազմաթիվ այլ գործոններից, որոնց արդեն անդրադարձել ենք: Հարկ է նշել նաև, որ ուսուցման պրոցեսում մեթոդները կարող են կիրառվել ինչպես ինքնուրույն, այնպես էլ այլ մեթոդների հետ համատեղ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս.Մանուկյան «Ընդհանուր մանկավարժություն», Երևան 2005, 557 էջ:
2. Յու.Ա.Ամիրջանյան, Ա.Ա.Սահակյան «Մանկավարժություն», «Մանկավարժ», Երևան 2005, 455 էջ:
3. Գ.Ե.Ղույումյան «Մանկավարժություն», գիրք 1, Երևան 2005, 463 էջ:
4. «Մանկավարժություն» ՍՍՀՄ ՄԳԱ անդամ Յու. Կ. Բաբանսկու խմբագրությամբ, Երևան 1986, 343 էջ:
5. Մ.Գ.Աստվածատրյան «Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա», Երևան 1985, 389 էջ
6.
<https://funnyenglishforyou.wordpress.com/2014/09/15/2352/>

